ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՈՒԽՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԵՎ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՎԵՐԱԴԱՐՁԻ ԱՌԹԻՎ

ՎԱՋԳԷՆ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱՋԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱՋԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ԱՄԵՆԱՊԱՏԻՒ Տ. ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ ՏԷՐՏԷՐԵԱՆ, ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ՀԱՅՈՑ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ, Ի ՔՐԻՍՏՈՍ ՍԻՐԵՑԵԱԼ ՊԱՏՈՒԱԿԱՆ ԵՂԲՕՐ ՄԵՐՈՅ, Ի ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅՍ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԱՅ, Ի ԳԱՀԷ ՍՐԲՈՅ ՀՕՐՆ ՄԵՐՈՅ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԵՒ Ի ԳԱՀԱԿԱԼԷ ՆՈՐԻՆ, ՈՂՋՈՒՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Աստուծոյ ողորմութեամբ Ս. Էջմիածնէն ճամբայ ելանք անցեալ տարի լոյս կգացումներով լեցուն և հասանք Ս. Քաղաք Երուսաղէմ կիրակի, հոկտեմբեր 13-ին: Ձերդ Սրբակնութիւնը, Ձեր միաբանութիւնը և համայն հայ հաւատացեալ ժողովուրդը, բացիք Ձեր սրտերը Մեր առջև և Մեզ ընդունեցիք ցնծութեան և օրհնութեան աղաղակներով:

Մենք ծունկի եկանք նախ Գլխադիր Ս. Յակոբայ Սեղանի առաջ և Մեր ուխտը կատարեցինք, և ապա եղբայրական սիրով ողջագուրուեցանք Ձերդ Սրբակնութեան և Ձեր վինուորեալ միաբաններուն հետ:

Մնացինք Ձեր յարկին տակ 21 օրեր: Ս. Քաղաքին մէջ ամէն օր սուրբ եղաւ Մեզի համար, ամէն օր Տէրը նոր ուրախութիւն մը պարգևեց Մեզի:

Կիրակի, 20 հոկտեմբերին, երկիւղածութեամբ սուրբ պատարագ մատուցինք Փրկչի Ս. Գերեզմանին վրայ և կիրակի, 27 հոկտեմբերին՝ Ս. Յակոբայ Սեղանին առջև, աղօթելով աշխարհի խաղաղութեան, Հայ Եկեղեցւոյ անսասանութեան ու հայ ժողովուրդի բարօրութեան համար:

Հոկտեմբեր 26-ին, Պատրիարքարանիդ կամարներուն տակ, ողջագուրուեցանք Մեծի Տանն Կիլիկիոյ շնորհազարդ Խորէն Ա Կաթողիկոսի հետ, վերահաստատելով միասնութիւնը և ներքին խաղաղութիւնը մեր Եկեղեցիին, ինչպէս նոյն նպատակով ողջագուրուեր էին 1651-ին Ս. Քաղաքիդ մէջ, նոյն կամարներուն տակ, երջանկայիշատակ հայրապետները՝ Փիլիպոս Ա Աղբակեցին, Ս. Էջմիածնէն և Ներսէս Սեբաստացին, Սիսէն եկած:

Իսկ հոկտեմբեր 15-ին, Մեր և Ձեր նախագահութեամբ, տեղի ունեցաւ Ս. Յարութեան Տաճարի վերանորոգութեան համազգային կեդրոնական յանձնախումբի լիագումար ժողովը, որուն որոշումները ապահովեցին առաջադրուած սուրբ նպատակի լիակատար յաջողութիւնը:

Մեր այցելութեան առթիւ ծանօթացանք Ս. Աթոռիդ սրբավայրերուն, կրթական և մշակութային հաստատութիւններուն, տպարանին, գանձատան, ինչպէս նաև Ձեր միաբանութեան և անոր մեղուաջան աշխատանքին՝ Ձերդ բարձր Սրբազնութեան հեղինակաւոր ղեկավարութեան ներքև: Շատ ուրախ եղանք տեսնելով Ձեր կազմակերպուած կեանքը, Ձեր գործունէութիւնը և Ձեր ապագայի սքանչելի ծրագիրները՝ ի շինութիւն և յառաւել պայծառութիւն Ձեր Առաքելական Ս. Աթոռին:

Անսահման ուրախութիւն է Մեզի համար յիշել նաև այն ջերմ վերաբերումը և ընդունելութիւնը, զորս վայելեցինք սուրբ տեղեաց մէջ Յորդանանեան պետական բարձրագոյն իշխանութեանց կողմէ: Մենք այս բոլորին համար երախտապարտ ենք մանաւանդ Յորդանանի բարեխնամ Թագաւոր՝ Նորին Վեհափառութիւն Հուսէին Ա-ին: Թող Աստուած խաղաղութեան և բարօրութեան մէջ պահէ Յորդանանի Ս. Երկիրը և իր բարեհոգի արաբ ժողովուրդը:

Այժմ վերադարձած ենք Մայր Աթոռ Ս. Էջմիածին:

Սակայն յաճախ Մեր մտածումը և Մեր սիրտը Ձեզի հետ են և Ձերդ Ամենապատուութիւնը Մեր կեանքին մէջ ներկայ: Այնքան շատ են և այնքան ջերմ ու կենդանի Ս. Քաղաքէն, Ս. Յակոբէն և Ձեզմէ Մեր բերած յիշատակները, որ յաճախ անոնք տիրական կը դառնան Մեր հոգւոյն մէջ ու երբոյր կը յաղթէ իրականութեան:

Մեր սոյն գրով, անգամ մը ևս կ'ուզեինք Ձերդ Ամենապատուութեան յայտնել Մեր շնորհակալութիւնը այն բոլորի համար, որ Դուք կենսագործեցիք Մեր Երուսաղէմ այցելութեան առթիւ: Դուք ոչինչ խնայեցիք, որպէսզի Ամենայն Հայոց Կաթողիկոսի ներկայութիւնը Ս. Տեղեաց մէջ իր բարձրագոյն մակարդակին վրայ մնայ միշտ: Դուք փառաւորեցիք Հայոց Հայրապետը և Մայր Աթոռը, և այսպիսով փառաւորուեցաք մանաւանդ Դուք, արդարօրէն: Ողջ լերուք, սիրեցեալ Եղբայր Մեր, և Ձեր վարձքը կատար:

Մենք կ'աղօթենք, որ Ձեր Աթոռին վրայ և Ձեր գործին մէջ մնաք միշտ հաստատ ու անսասան, խաղաղ ու անվրդով, միշտ լիութեանն մէջ Ձեր իմաստական և հոգեկան ուժերուն, միշտ պայծառ հաւատքով ու նուիրումով դէպի Հայ Եկեղեցին, դէպի հայ ժողովուրդը և դէպի Ամենայն Հայոց Ս. Էջմիածինը:

Փրկչի Իջման Ս. Սեղանէն Ձերդ Սրբազնութեան նը յղենք եղբայրական անխառն սիրոյ ջերմագին ողջոյն և մաղթանքներ բարի, մաղթանքներ սրտաբուխ, որ լուսաւոր ու փառաւոր մնայ միշտ Ձեր կեանքի ուղին:

«Աստուած յուսոյ՝ լի արասցէ զձեզ ամենայն խնդութեամբ և խաղաղութեամբ, առաւելուլ ձեզ յուսով՝ զօրութեամբ Հոգւոյն Սրբոյ» (Հռովմ. ԺԵ 13):

Ամէն:

Տուաւ կոնդակս ի 20-ն յունուարի
1964 Փրկչական ամի,
և ի տումարիս Հայոց ՌՆԺԳ,
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի:

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ